ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՎԱՆԸ
(Ա-Դոյի անտիպ հուշերից)

1915 թ. ճակատագրական էր հայ ժողովրդի համար: Այդ թվականին լայն թափ են ստանում թուրքական կառավարության կողմից իրականացված Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում բնակվող հայերի զանգվածային կոտորածները և բռնագաղթը՝ ցեղասպանությունը: Արևմտահայությունը, չնայած անբարենպաստ պայմաններին, որոշ վայրերում կարողանում է կազմակերպել ռազմական դիմադրություն: Նման վայրերից է Վան քաղաքը և համանուն նահանգը: Ռուսական բանակի ու հայ կամավորական ստորաբաժանումների առաջխաղացումը հնարավորություն է տալիս փրկվել վասպուրականցիների մեծ մասին: Մայիսի 7-ին ռուսական հրամանատարությունը Վանի և գրավված շրջանների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակում Արամ Մանուկյանին: Կարճ ժամանակում նա կարողանում է կազմակերպել ազգային միասնության իշխանություն, որտեղ ընդգրկվում են սոցիալական տարբեր ծագում ունեցող, կուսակցական և անկուսակցական պատկանելության անձինք:

Ազատագրված և աստիճանաբար վերականգնվող Վանն իրեն է ձգում ժամանակի հայ հասարակական, քաղաքական ու կրոնական գործիչների, նաև շարքային քաղաքացիների համակ ուշադրությունը: Հասարակական և կրոնական կազմակերպություններն ու ընկերություններն ունեցած գրեթե բոլոր միջոցներն ուղղում են Վան՝ այն արագ վերականգնելու և գաղթականությանն օգնելու համար:

Ի թիվս այլոց, Վասպուրական է գալիս XIX դարի 80–90-ական թվականներից հայ հասարակությանը հայտնի Ա-Դոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1867–1954 թթ.): 1881 թ. Նոր Բայազետից տեղափոխվելով Երևան՝ նա աշխատանքի է անցնում ավագ եղբոր՝ Սիրեկանի խանութում՝ որպես վաճառող: Այդ աշխատանքը, սակայն, չի գրավում նրան: Պատանին ձգտում է լրացնել ծննդավայրում ստացած կրթությունը: Ա-Դոն սովորում է Երևանի թեմական դպրոցում (1889–1901 թթ.), ապա որպես ազատ ունկնդիր՝ Խարկովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1905 թ.) և Ս. Պետերբուրգի հոգե-նյարդաբանական ինստիտուտում (1909 թ.): 1888 թ. հունվարի 23-ին «Մշակ» թերթում տպագրվում է 21-ամյա Ա-Դոյի առաջին հոդվածը: Նա հեղինակ է մի շարք ուսումնասիրությունների[1], սակայն առավել հայտնի են Ա-Դոյի այն գործերը, որոնք վերաբերում են

[1] *Ա-Դ ո. Մակեդոնիա, Ս. Պետերբուրգ, 1903, ն ո ւ յ ն ի՝ Հայրենիքի կարոտը, Ս. Պետերբուրգ, 1905, ն ո ւ յ ն ի՝ Միքայել Նալբանդյանի կյանքի հետաքրքիր մի էջ և Բակունինի նրան գրած նամակները, Երևան, 1908, ն ո ւ յ ն ի՝ Ազատագրական շարժումը Ռուսաստանում իր ծագման առաջին օրերից, Երևան, 1908:*

Արևմտյան Հայաստանին[2], հայ-թաթարական ընդհարումներին[3] և Վան-Վասպուրականի 1915 թ. դեպքերին[4]: Հատկապես կարևոր են նրա անձնական դիտարկումները, որոնք կատարել է ազատագրված Վան և գավառներ այցելելիս (1915 թ. հունիսի 14-ից հուլիսի 25-ը): Այս և այլ նյութերը գալիս են լրացնելու նրա «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին» աշխատությունը:

Ստորև ներկայացվող փաստաթուղթը տպագրվում է առաջին անգամ, ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով: Նյութի վերնագիրը հեղինակինն է: Ուղղագիծ փակագծերը մերն են: Փաստաթղթի պատճենը մեզ է տրամադրել Ա-Դոյի դուստրը՝ տիկին Ադոլիան, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՎԱՆԸ

1915 թ. ապրիլ ամիսը հանդիսացավ ծանր ու հոգեմաշ ապրումների ամիս: Ջարդերի ենթարկված սահմանամերձ շրջաններից շարունակ գալիս էին փախստական հայեր՝ իրենց հետ բերելով ջարդերի նորանոր նկարագիրներ և դրանցով ավելի ու ավելի խտացնելով այն հոգեմաշ ապրումները, որ կրում էր հայ ժողովուրդը սահմանի այն կողմում:

Հոգեկան այդ վիճակը ծայրահեղ լարվածության հասավ հատկապես ապրիլ ամսի առաջին տասնօրյակի ընթացքում:

– Վանը պաշարված է չորս կողմից:

– Շրջաններից ահագին քանակությամբ կանայք և երեխաներ կուտակվել են Վան և սովամահ են լինում:

– Կառավարական թնդանոթները շարունակ ռումբեր են թափում քաղաքի վրա:

– Քրդական չեթեները, տաճիկ հորդաները, զորքերին միացած, հետզհետե սեղմում են պաշարման օղակը:

– Վանը վերջին րոպեներն է ապրում, թշնամին նոր ուժեր է բերում, ներխուժումն անխուսափելի է:

– Տասնյակ հազարավոր ժողովուրդներ կանգնած են անդունդի ծայրին– օգնությո՛ւն, օգնությո՛ւն …:

Ահա այն հուսահատ կոչերը, որ հասնում էին սահմանի այս ու այն կետերից ամեն օր:

Այս էր հայության վիճակը սահմանի մյուս կողմում, ապա ինչ անցուդարձ տեղի էր ունենում սահմանի այս կողմում ու Կովկասի հայկական շրջաններում, հատկապես Երևանի նահանգում ու Երևանում:

---

[2] *Ա - Դ ռ. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները. Ուսումնասիրության մի փորձ այդ երկրի աշխարհագրական, վիճակագրական, իրավական և տնտեսական դրության, Երևան, 1912:*

[3] *Ա - Դ ռ. Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.), Երևան, 1907:*

[4] *Ա - Դ ռ. Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երևան, 1917:*

Զանազան տեղերից ստացվող հեռագիրները և հաղորդումները սոսկալի ջարդերի մասին մեկ կողմից, մասսայական ջարդերից ազատված և Կովկաս փախած հայերի պատմածները մյուս կողմից սոսկում և հուզումներ էին առաջ բերում հայկական շրջաններում. վիշտը համակել էր բոլորին:

Այս պայմաններում վերակազմվում էին կամավորական գնդերը, և եռուն աշխատանքներ էին գնում այդ գնդերի մեկնումը արագացնելու համար:

Թե ինչպիսի հույսեր էին դրված կամավորական գնդերի վրա, որպիսի ցույցեր էին տեղի ունենում նրանց նկատմամբ, սոսկումները կանխող ու ահազանգող հաղորդումների տպավորության տակ՝ գաղափար կազմելու համար, այստեղ բերում եմ մեկ քաղվածք իմ օրագրի տետրից:

12 ապրիլի – կիրակի:

Երեք օր շարունակվող մառախլապատ և անձրևոտ եղանակը տեղի է տվել պայծառ ու արևոտ առավոտին, որը գալիս է օրն ավելի հանդիսավոր դարձնելու:

Ոտի վրա է ամբողջ Երևանը. ժողովուրդը կառքերով ու ոտով դիմում է դեպի Քանաքեռ ձգվող բլուրների լանջերը, որտեղից բացվում է բուսազարդ Երևանը, Արարատյան դաշտը և նրա սահմանի վրա բազմած մեծ ու փոքր Արարատներն ընդգրկող հմայիչ տեսարանը:

Այսօր Երևանի հայ հասարակայնությունը տալիս է կամավորական գնդերին ճաշ:

Դեպի Քանաքեռ ձգվող լանջերի վրա խմբված են կամավորական գնդերը: Անդրանիկն իր զորամասով գտնվում է պարսկա-տաճկական ճակատում – նրա զորամասում հաշվում են 1500 զենք կրող, մնացյալ զորամասերը, որոնց զենք կրողների թիվը հասնում է 3000-ի (500 ձիավոր, 2500-ը հետևակ), գտնվում են այստեղ:

Դրանք են՝ 1) Դրոյի զորամասը, 2) Քեռու զորամասը, 3) Համազասպի զորամասը: Ընդհանուր հրամանատար կարգված է Վարդանը [Խանասորի Վարդան]: Քեռին և Համազասպն ունեն իրենց դրոշակները, իսկ Դրոն չունի: Ուստի տեղ են հասնում Երևանի հայ կանանց ներկայացուցիչները և հանդիսավոր կերպով հանձնում են Դրոյին Երևանի կանանց պատրաստված ասեղնագործ գեղեցիկ դրոշակը:

Ժամը 11-ին տեղի է ունենում զորախաղ, ձիավոր հարյուրյակները, պորուչիկ Շահխաթունու ղեկավարությամբ չափ տալով, հարձակվում և գրավում են շրջակա բլուրները և պտույտներ գործելով սրարշավ վերադառնում են:

Ժամը 12-ին կամավորները բոլորում են գետնին բացված ճաշասեղանին ու ժողովրդական և ազգային երգերի հնչյունների, նաև ժողովրդի կեցցեների և բարի երթի աղաղակների հնչյունների տակ սկսվում է ճաշը: Որից հետո նույն երգերի հնչյունների և ժողովուրդի ողջույնի ու կեցցեների ուղեկցությամբ վերադառնում ենք քաղաք:

Երեկոյան, ի պատիվ կամավորների, առաջնորդարանում տեղի ունեցավ հանդիսավոր ճաշկերույթ, որին մասնակցում էին հրամանատարական կազմի 75-ի չափ անձինք:

15 ապրիլի – չորեքշաբթի:

Այսօր կամավորական գնդերը մեկնում են: Քաղաքը տոնական տեսք ունի – խանութները փակ են, դպրոցները արձակված են: Ժողովուրդը – մարդ, կին, երեխա խռնված են Աբովյան [Աստաֆյան] փողոցի երկարությամբ: Քանաքեռից գալիս, անցնում է Դրոյի զորամասը՝ ժողովրդի կեցցեների ու ողջ երթի աղաղակներով:

Ժամը 6-ին Մլեր կոչվող հրապարակում տեղի է ունենում շքերթ, այդտեղ են նահանգապետն իր շքախմբով, կոզակների վաշտը, հետևակ ռուսական զորքը և ահագին բազմություն, դրանց առջևով գալիս-անցնում են շարք-շարք կամավորական նախ հետևակային հարյուրյակները և ապա ձիավոր հարյուրյակները՝ հրացանները զարդարված ծաղիկներով:

Ժամը 10-ին սկսվում է հայ և ռուս հոգևորականների մաղթանքի ժամերգությունը, որից հետո տեղի են ունենում մի շարք ճառախոսություններ:

Ապա սկսվում է մեկնումը, կամավորները երկար ու երկար շարքերով գալիս ու անցնում են ռուսական զորքերի և ահագին ժողովրդի բարեմաղթությունների և կեցցեների խլացուցիչ աղաղակների ուղեկցությամբ: Մլերից սկսած մինչև Հրազդանի կամուրջը և կամուրջից էլ այն կողմ, ամբողջ ճանապարհի երկարությամբ սպասում է բազմությունը, և երբ երևում է կամավորական մասերի ծայրը, սկսվում է [են] կեցցեների և բարի երթի խլացուցիչ աղաղակները, մինչև որ կամավորների վերջին շարքերը թողնում են Հրազդանի կամուրջը:

Կամավորական բանակը գնաց՝ տանելով իր հետ մեծ հույսեր, բայց շատերին հուզող լուրերը շարունակվեցին և այնքան ավելի հուզող, որքան ջարդերի սոսկալի նկարագիրները:

Եվ այն մոմենտին, երբ ամեն հույս համարվում էր կորած, երբ ամենքս, ամբողջությամբ լսողություն դարձած, սպասում էինք վերջին գուժաբեր հաղորդմանը, մեկեն կայծակի արագությամբ տարածվեց Վանից ռուսական բանակի գեներալ Նիկոլաևից ստացված հեռագրի բովանդակություն. «10 մայիսի 1915 թ., Վան.

Շնորհիվ հայ ժողովրդի և ղեկավարությամբ ռուսահպատակ Արամի՝ Վանը մեկ ամիս պաշտպանվեց, և երեք օր առաջ միայն հայերը գերակշռեցին, ու տաճիկները սկսեցին նահանջել: Քաղաքն այրված է, ազատ են մնացել մի քանի հայաբնակ թաղեր և ռուսական հյուպատոսարանը: Քաղաքին մոտենալիս միջնաբերդի վրա տաճիկներից գրաված վեց թնդանոթներից տեղի ունեցավ ողջույնի թնդանոթաձգություն, և հայերը հանձնեցին ինձ բերդի բանալիները»[5]:

Պատկերացնում եք արդյո՞ք կախաղանի դատապարտված անմեղ մարդու ուրախության այն վերջին ճիչն ու հուզմունքը, որ դուրս է թռչում նրա կրծքից վերջին մոմենտին ավետաբեր հաղորդումը լսեցին:

---

[5] *Եվ ինչպես վկայում է Վարդանը, գեներալ Ա. Մ. Նիկոլաևը պահանջում է քաղաքի բանալիները, և «Արամն էլ, մի քանի մեծ բանալիներ ժողովելով քաղաքացիներից, որպես բերդի բանալիներ՝ հանձնեց Նիկոլաևին, նա էլ յուր հերթին այդ մի խուրձ բանալիները, որպես հաղթության նշան, ուղարկեց կովկասյան զինվորական իշխանության: Բերդը բանալիներ չուներ, որ տրվեր Նիկոլաևին» (տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 4):*

– *Վանը հաղթանակել է, ահա այն զույգ բառերը, որոնք դարձան այդ օրերի սիմվոլը և գնացին հուզելու և համակելու զգայուն սրտերը:*

– *Վանը փրկվեց, Վանը ազատագրվեց, Վանը հաղթանակեց, այս էր այդ օրերի հուզող խնդիրը, Վանը դարձավ ուխտատեղի, և սկսվեց արտասովոր ուխտագնացություն դեպի Վան:*

Անցան մի քանի օրեր, մտքերը խաղաղվեցին, և ես որոշեցի այցելել Վան, ինձ թելադրեցին երկու հանգամանք, նախ՝ տեսնել վեց տարի առաջ տեսածս Վանը նոր ստեղծված պայմաններում, երկրորդ՝ մոտիկից ծանոթանալ և գրի առնել վերջին անցքերը մի փոքր հանգամանորեն:

Երևանում երկու ծանոթ ուսուցիչների հետ ընկերանալով՝ հունիս 14-ին ճանապարհվեցինք Իգդիր, տեղ հասնելով վարձեցինք մեկ կառք և հունիսի 15-ին ոտք դնելով նախկին տաճկական սահմանի վրա՝ բռնեցինք Վան տանող ճանապարհը, կտրելով Թափարիզի լեռնանցքը և Աբաղայի ընդարձակ դաշտը, հունիսի 16-ին հասանք Բերկրի ավանը:

Ամբողջ երկու օրվա ճանապարհորդությունից հետո առաջին հայաբնակ վայրն էր, որին հանդիպում էինք: Այդտեղ պատերազմից առաջ ապրում էին 25 տուն հայեր և 70 տուն քրդեր, ռուսների գրավման հետևանքով քրդերը հեռացել էին, մնում [էին] հայերը, և ես դուրս եկա տեսնելու այդտեղ ապրողներին:

Բերկրի ավանի հայ ժողովրդի կրած տառապանքների նկարագիրը բերում ենք այստեղ՝ քաղելով իմ հուշատետրից: Ահա այդ նկարագիրը.

Փոքրիկ ավանն ընդամենը 25 տուն հայ և 70 տուն քուրդ ընտանիքներ ունեցող Բերկրին, որը համարվում էր համանուն շրջանի կենտրոնավայրը, ենթարկվել էր նույն վիճակին, ինչ վիճակի, որ կոտորածների օրերին ենթարկվել էին Վասպուրականի հայաբնակ բոլոր գյուղերն ու ավաններն անխտիր:

Ավերված տներ, քար-հողային կույտեր, այսուայնտեղ ցնցոտիներ հագած երեխաներ և կանայք՝ գունատ և հյուծված դեմքերով. անունը [այդպես է փաստաթղթում] տղամարդ չի երևում. տպավորությունը խիստ ճնշող է. ավանի միջով ձգվող ճանապարհը բռնած՝ դիտող հայացքով շարժվում են առաջ և ավանի ծայրում ընկած մեկ տան առաջ կանգ առնում: Իմ ուշադրությունն է գրավում իր վրա այդտեղ խմբված մեկ բուռ երեխաներ ու երկու կանայք: Մոտենում եմ նրանց. հագուստները մաշված ու ծվեն, դեմքերը գունատ ու հյուծված, հայացքները հարցական ու սարսափներ ապրած, տեսարան, որը վկայում է, թե որպիսի փոթորիկ եկել, ավերել ու անցել է այդ ավանի վրայով:

Դիմում եմ երկու կանանց իմ բազմապիսի հարցումներով, տալիս են պատասխան իմ բոլոր հարցումներին և պարզվում է՝ իմ առաջ ցուցադրված էր Բերկրի ավանի հայ ժողովրդի ամենաուններ ընտանիքի բեկորը: Դա Շաթիրի Սիմոն աղայի տունը և ընտանիքն էր: Սիմոն աղան չկար: Նա թողել էր այս աշխարհը մի քանի տարի առաջ բնական մահով, նա չկար, բայց նրա անունը պահպանվում էր և շարունակ հիշվում:

Որպես ընտանիքի գլուխ, մնում էր Սիմոն աղայի կինը՝ Սանամն իր երկու առողջ և աշխատասեր տղաներով:

Մեծ տղան՝ Մեդրակը, 35 տարեկան էր:

Սրա կինը՝ Եթոն, 30 -,,-:

Սրանք ունեին 4 երեխա՝ բոլորն էլ աղջիկներ՝ 6, 8, 10 և 12 տարեկան:

Երկրորդ տղան՝ Աղամիրը, 32 տարեկան էր:

Սրա կինը Երանուհին 27 -,,-:

Սրանք ունեին մեկ տղա՝ անունը Դաշնակ, 5 տարեկան:

Բացի այդ՝ Սիմոն աղան թողել էր մեկ աղջիկ՝ Զարուհի՝ 20 տարեկան:

Մեկ ընտանիք՝ 12 շնչից բաղկացած, որից ներկայում մնում էին Սանամը՝ 55-ից վեր տարիքով՝ խոհուն ու խելահաս կին և մեծ հարսը՝ Եթոն, որոնք պատմում էին ինձ իրենց գլխով անցածը, և երկու եղբայրների երեխաներն՝ ինձ շրջապատած: Այդ ընտանիքից պակասում էին երկու եղբայրները, փոքր հարսը՝ Երանուհին և երկու եղբայրների քույրը՝ Զարուհին:

Երկու եղբայրները՝ Մեղրակն ու Աղամիրը, ապրիլի կեսին ավանի բոլոր տղամարդկանց հետ կապկպված տարվել էին ավանից վեր՝ Բանդի Մահու գետի կամրջի մոտ, գնդակահարվել և ուռճացած գետի հոսանքին նետվել: Իսկ Երանուհին ու Զարուհին անհետացել էին, ուր՝ հայտնի չէր, անշուշտ, առևանգվել ու տարվել էին անվերադարձ:

Բարբարոս պետությունն իր ոճիրը ծրագրել էր մտացածին՝ անխնա ոչնչացնել 15 տարեկանից վեր բոլոր հայ տղամարդկանց, կանանց և աղջիկներին խնայել տոփանքի համար, իսկ երեխաներին պահել բարբարոս ցեղը բազմացնելու համար:

Երկու կանայք երկար ու երկար պատմում էին այս բոլորը, պատմում հառաչանքներով՝ զազիր օրերի անցքերից, այտերը հեղեղում աղի շիթերով, և հեկեկանքները խեղդվում էին նրանց կոկորդներում:

Ընտանեկան եղեռնի վերաբերյալ հարցուփորձերն ավարտելուց հետո, երբ ես հետաքրքրվեցի ընտանիքի անցյալում ունեցած տնտեսության՝ պաշարի, գույքի և անասունների վերաբերյալ հարցերով, երկու կանայք ինձ առաջնորդեցին նախ իրենց թոնրատունը. այդ սովորական չորս սյուների վրա տանիքը կառուցված տուն էր, բայց կողոպտված ու մերկ, սակայն այդ տան ընդարձակությունը, սյուների մեծությունն ու ծածկի կառուցվածքը վկայում էին այն, որ այդ ընտանիքը եղել էր ունևոր ու հարուստ, իսկ ներկայումս երկու կանայք ու մի բուռն երեխաներ ծվարած այդ միակ, ավերիչ ձեռքից ազատված ծածկի տակ ապրում էին ծայրահեղ չքավորության և կարիքի մեջ:

Ահա երկու կանայք ինձ առաջնորդեցին հողակույտերի վրայով վեր. բացվեց իմ առաջ ընդարձակ ու երկարուկ ախոռը՝ տանիքը փլված, փայտերը տարված ու ավերակ, միակ առարկան, որ մնացել էր, այդ վերի ծայրում պատի մեջ ամրացված բուն ախոռի գերանն էր՝ վրան գամված ու քարշ ընկած երկաթյա ամուր շղթաներ, որոնց պոկել ու տանել հնարավոր չէր:

Այդ ախոռում պահվում էին 3 լծկան գոմեշներ՝ Արաբը, Փոռոն, Դալարը, 3 շղթաները այդ երեք գոմեշների կապերն էին: Այդ ախոռում պահվում էին նաև 3 կթի գոմեշներ՝ իրենց ձագերով, մի քանի կովեր՝ իրենց հորթերով, նաև երինջներ, արջառներ և այլն՝ երեք տասնյակի չափ անասուններ:

«Ախր մեր կթի գոմեշներն ու կովերը, մեր Արաբը, Փոռոն, Դալարը, որոնք քաշում էին մեր գութանը, վարում մեր արտերը, սայլերով դաշտից տուն կրում ցորենը, գարին…».– Աղեկտուր տոնով պատմում էին երկու կանայք, ախ ու վուշեր արձակում, նրանց այտերը նորից ու նորից հեղեղվում էին աղի շիթերով, և նրանց հեկեկանքները խեղդվում էին նրանց կոկորդներում:

Այդ բոլոր ունեցվածքին ներկայում փոխարինում էր Կարմիր խաչն իր սուղ նպաստներով, կաթիլներ ահավոր թշվառության և կարիքի օվկիանոսում:

Երկու կանանց հուզմունքից հուզված՝ ցած իջա հողաթումբերի վրայից և պատրաստվում էի ուղղել նրանց մի երկու հուսատու խոսքեր ու հեռանալ, երբ այդտեղ խմբված երեխաներից մեկն իր վրա գրավեց իմ ուշադրությունը. դա 3–4 տարեկան տղա էր՝ գլուխը երկարուկ, նիհար, սևացած դեմքով, փորը մերկ՝ դուրս ցցված, ոտներն ու սրունքները նույնպես մերկ. այդ երեխան իր դիմագծերով տարբերվում էր մյուս երեխաներից, մանավանդ, երկարուկ գլխով:

«Ո՞վ է այդ երեխան,– հարց տվի այդ կանանց՝ ուշադիր դիտելով երեխային»:

«Սա քրդի երեխա է, ռուս զորքի գալուց հետո, երբ քրդերը փախել էին արդեն, այդ երեխան մնացել էր փողոցում սոված և աղեկտուր լացելիս, մենք մեղքացանք, վերցրինք դրան ու խառնեցինք մեր երեխաներին ու նրանց հետ ապրում է»,– պատասխանեցին երկու կանայք սովորական տոնով:

«Դուք, քույրի՛կ Սանամ և Եթո, խղճացել եք փողոց մնացած այդ քուրդ երեխային, վերցրել պահում եք նրան և ձեր երեխաների հացից բաժին եք հանում նրան, ապա ինչպե՞ս էին վերաբերում Ձեր տղամարդիկ դեպի ձեր ավանի չքավորներն ու կարիքավորները»,– դիմեցի նրանց այս հարցով, համոզված, որ նման վերաբերմունք հատուկ է եղել այդ ընտանիքին:

«Իմ տղաները շատ խղճով մարդիկ էին, ամենքին ձեռք էին բռնում, ամենքին օգնում էին հացով, թացանով և ամեն բանով»,– պատասխանեց Սանամը:

«Իսկ էրիկը և տեգրս հացով, պատվով մարդիկ էին, նրանց դուռը բաց էր բոլորի առաջ, ոչ միայն հայերը, այլև շատ քրդեր մեր սեղանին կնստեին ու հյուրասիրություն կգտնեին, և դրա փոխարեն Աստված միշտ մեզ տալիս էր»,– պատասխանեց Եթոն:

«Ապա ինչպե՞ս եղավ, որ ձեր պատիվն ու հյուրասիրությունը վայելող քրդերը կոտորածի ժամանակ օգնություն ցույց չտվին ձեր տղամարդկանց, նրանց չթաքցրին ու գնդակահարությունից չփրկեցին»,– նորից հարց տվի ես:

«Քուրդը բախտ չունի, բարեկամություն, լավություն չգիտե, ամեն բան ոտքի տակ կտա ու կանցնի, եթե առիթ լինի կողոպտելու, գողանալու նույնիսկ սպանելու, երբ մեր տղամարդկանց տարան կոտորեցին, սկսվեց կողոպուտ հայերի տներում քրդերի ձեռքով. մեր տուն մտան մեր հացը ուտող քրդերը, տարան մեր պաշարը, մեր հացը, յուղն ու պանիրը, մեր

տան եղածն ու չեղածը, դուրս քշեցին ախոռից մեր գոմեշները, կովերը, մնացյալ բոլոր անասունները մեկիկ-մեկիկ ու տարան. մենք լացում էինք, աղաչում, ոտներն ընկնում, փարվում էինք անասունների վզով, կախ էինք ընկնում նրանց եղջյուրներից, ոչինչ չէր օգնում, քաշում, հրում, հայհոյում, անգամ հարվածներ էին իջեցնում մեր գլխին ու տանում. նրանց մեջ խիղճը վերացել էր, գազան էին կտրել, մարդակեր գայլեր դարձել»:

Այդ խոսքերն արտասանեց Եթոն դառը վշտով, և մեկեն փոխվեց նրա ձայնը, այլայվեց դեմքը, ջղաձգություններ գործեց, և ջահել կինը մի ճիչ արձակեց և, ձեռքը դեպի քուրդ երեխան պարզելով, աղաղակեց. «Իմ էրիկը, իմ էրկանը դրանք սպանեցին, մեր տունը թալանեցին, մեր անասունները դրանք քշեցին ու տարան, դրանք սպանեցին իմ էրկանը, դրանք կերան իմ էրկանի գլուխը» և ատամները կրճտացնելով՝ ավելացրեց. «Այդ լամուկին այս ձեռքերով կխեղդեմ, նրան ծվեն-ծվեն կանեմ, իմ էրկան վրեժը կլուծեմ»:

Սանամը մոտեցավ հարսին, բռնեց նրա ձեռքը և մեղմ ու համոզիչ տոնով արտասանեց. «Հանգստացի՛ր, աղջիկս, հանգստացի՛ր: Ի՞նչ մեղք ունի այս երեխան, որ նրա մեծերը գործել են այսքան չարիքներ, մի՞թե նրան խեղդելով կփարատվի մեր վերքերը, կմեղմվի մեր թշվառությունը»:

Այս խոսքերն ազդեցություն գործեցին ջահել կնոջ վրա, նրա ջղայնությունը հետզհետե մեղմվեց ու տեղի տվեց հեկեկանքի, ապա աղեկտուր լացի, լացեց նաև խոհուն Սանամը և ապա փոքրիկները. ստեղծվեց մեկ ծանր, մեկ հուզիչ տեսարան, որը համակեց նաև ինձ:

Այդ ծովացած վիշտը մեղմելու անկարողության բեռը մեջքիս՝ ուղղեցի այդ վշտոտ կանանց մի քանի մխիթարական ու հուսադրող խոսքեր ու հեռացա: Հեռացա, բայց երկար հետապնդում էր ինձ ծանր հուզմունքը և շիթեր կորզում իմ բիբերից:

Ծանր տառապանքների տխուր պատմությունը մեկ կողմից և խոհուն ու մարդասեր Սանամի կերպարը մյուս՝ ալեկոծում էին իմ սիրտը երկար ժամանակ:

Վշտի ու թշվառության մեջ տապակվող Սանամի վեհ վերաբերմունքը դեպի քուրդ մանուկը ցցվում էր իմ առաջ՝ որպես առաքինության կերպար:

Սանամը մարմնավորում էր իր մեջ կյանքի վեհ իմաստը, սանամներն իրենց տրամաբանությամբ իրենց ծնող ցեղի համար դարբնում էին գոյության իրավունքը:

Սանամի կերպարը հանդիսացավ առիթ, և ես վերհիշեցի մեկ մոմենտ տեղի ունեցած ամիսներ առաջ Մարգարա գյուղում: 1914 թվի դեկտեմբերի վերջին օրերն էին, արտասովոր եղանակ, անձրև, շարունակվող անձրև, ցուրտ ու անտանելի ցեխ. տաճկական արշավող բանակը կարճատև հաջողության շնորհիվ հասել էր Սարիդամիշ, Արդահան, Օլթի, սահմանամերձ տաճկահայ ժողովուրդը սարսափահար ձգել էր ամեն ինչ և բռնել փախուստի ճանապարհը: Հին Բայազետի, Ուչքիլիսեի, Ալաշկերտի շրջանների ժողովուրդը՝ 15000-ի չափ, Բարդողյան լեռնաշղթան թևակոխելով և մեկ շաբաթ անձրևների տակ ճանապարհ կտրելով, Մարգարա էր հասնում

սոսկալի վիճակում՝ սոված, թրջված, ցեխոտ և հյուծված: Մարգարա գյուղի հայ ժողովուրդը բացում էր իր դռները և ներս առնում մարդկային կերպարանք կորցրած այդ թշվառներին, վառում թոնիրը, ջուր տաքացնում, թրջված հագուստները չորացնում, ցեխն ու կեղտը լվանում ու մաքրում և հաճախ իր ունեցածից ճաշասեղան բացում նրանց առաջ և ճանապարհ ձգում:

Ականատես հայ գյուղի այդ վերաբերմունքին՝ ինձ մեջ ծագեց արտասովոր հուզմունք. հուզմունք ապրում էի 6–7 օր շարունակ, որի ընթացքում գալիս ու անցնում էին փախստական թշվառների շղթաներն անվերջ. այդ տխրության ու վշտի հուզմունք էր, դրա կողքին ծնունդ առավ այլ հուզմունք – մխիթարիչ, սփոփիչ, անգամ հպարտության հուզմունք:

Եվ ես առաջին անգամ ապրեցի հուզմունք և իմ բիբերում զգացի առաջին անգամ հուզմունքի շիթեր, շիթեր՝ և՛ վշտի, և՛ ուրախության Մարգարայում: Իսկ երկրորդ անգամ այստեղ՝ Բերկրի ավանում:

Այս փոքրիկ նկարագրությունն ընդհանուր պատկերն էր այն սոսկալի տառապանքների, որ կրել էր այդ ավանի 25 գերդաստանը չարաբաստիկ օրերում:

Ես թողի Բերկրին ծանր տպավորությունների տակ. նույն երկնակամարի տակ՝ բարբարոս ցեղերի, բարբարոս ձեռքի, բարբարոս գործողությունների կողքին, իր բյուրեղացած առաքինությունն էր պահպանել տառապանքներ ապրած մարդասեր Սանամը: Ծայրահեղ զայրույթը մի կողմից և ծայրահեղ առաքինության հուզմունքը մյուս [կողմից] երկար ժամանակ ալեկոծում էին իմ ներսը:

Հունիսի 17-ին ես հասա Վան. քաղաքի գլխավոր մուտքից դեպի աջ հին Վանն էր, որը կոչվում էր Քաղաքամեջ, դեպի ձախ նոր Վանն էր, որը կոչվում էր Այգեստան. ոտք եմ դնում Այգեստանի Խաչ Փողան կոչվող երկար փողոցը և առաջ շարժվում: Այդ փողոցը, որ Այգեստանը կապում է Քաղաքամեջի հետ և որն առաջ ամենաբանուկ փողոցն էր, ամայի է, դատարկ, տները մեծ մասամբ այրված են ու ավերակ, տպավորությունը ծանր է: Սակայն պատկերը մեկեն փոխվում է, երբ ոտք եմ դնում Խաչ Փողանի հրապարակը, և առաջանում եմ դեպի Փոքր Քյանդրչին. նախկինում անշուք հրապարակի վրա բուսել են խանութներ, թեյատներ, նույնիսկ երկու հյուրանոց: Այսուայնտեղ կոկ պատերի մեջ բացում են անցքեր՝ որևէ ձեռնարկության ծառայեցնելու համար: Այս շրջանը հատկացված է շուկայի:

Հրապարակից քիչ հեռու գտնվում է ֆրանսիական Դոմինիկյան քույրերի որբանոց-դպրոցի երկու հարկանի ընդարձակ շենքը, որում զետեղված է Վանի ժամանակավոր կառավարությունն իր բազմաթիվ մարմիններով:

Ահա այս նոր բուսած խանութների, թեյատների, հյուրանոցների շուրջը և կառավարության շենքի դուրսը և ներսը եռում է կյանքը, ելք ու մուտք են անում խմբերով, շտապ գնում-գալիս են մարդ, կին, մեծ ու փոքր, խոսում, վիճում են, վազվզում են ամենքը:

Բազմազան են հագուստները, բազմազան են նաև բարբառները, խոսակցությունը, բայց ընդհանուր է մի բան՝ այն, որ բոլորը տարված են

մեկ գիտակցությամբ, մեկ ընդհանուր գաղափարով, այն բանով, որ պետք է կառուցել, վերակառուցել և կառուցել հիմքից և նորը:

Այս Վանն էր՝ պայքարող, մարտնչող Վանը, այն Վանը, որն ամբողջ մեկ ամիս գոյության մենամարտ մղեց, հարվածեց ու հարվածվեց, քանդեց ու քանդվեց, զոհվեց ու զոհեց և այդ ծանր, անհավասար պայքարից դուրս եկավ որպես հաղթանակող և անցավ նոր կյանքի կառուցման և ստեղծագործության:

Անցնելով Վանի հերոսական պայքարի ուսումնասիրությանը՝ նախ ես շրջեցի Այգեստանի կրակային ամբողջ գիծը, կանգ առնելով մի առ մի առանձին դիրքերի վրա, դիրքեր, որոնք ամբողջ մեկ ամիս, համարյա ամեն օր, անընդհատ թշնամու համազարկերի հարվածներից քանդվել էին և նույն գիշերվա ընթացքում նորից կառուցվել:

Որքան աշխատանք ու եռանդ թափվել էին այդ դիրքերի վրա, և որքան կյանքեր զոհ էին գնացել այդ դիրքերում:

Մեծ մասամբ այդ դիրքերը կործանվել էին, վեր էին ածվել ավերակների, բայց նրանց պաշտպանները թշնամուն պարտության էին մատնել, հաղթանակել էին և գոյության իրավունք էին ձեռք բերել:

Յուրաքանչյուր դիրքի հետ կապված տալիս էին ինձ անուններ, պատմում էին հերոսության ակտեր, որոնք զարդարելու էին այդ պայքարի էջերը:

Այգեստանի բազմաթիվ կրակային դիրքերը շրջելու համար ես կորցրի մեկ ամբողջ օր:

Հաջորդ օրը ես այցելեցի Քաղաքամեջի կրակային դիրքերը, պատկերն այստեղ նույնն էր, բայց ավելի խտացած գույներով. այստեղ, թշնամու հակադիր դիրքերից բացի, քաղաքի վրա գործել են ժայռապատ բերդից նետվող ռումբերը: Սակայն այստեղ հերոսական աշխատանք են տարել 10–12 տարեկան մանուկներ, որոնք նետվել են ընկնող ռումբերի վրա և մինչև որ ռումբերը կպայթեն, ձգել-հանել են ծխացող պատրույգները, և այդպիսով ռումբերը ոչ միայն անվտանգ են դարձրել, այլև դրանցում եղած վառոդն օգտագործվել է թշնամու դեմ:

Վանի պայքարի կրակակետերը շրջագայելուց հետո ես այցելեցի կառավարության տունը: Երկու հարկանի շենքի ընդարձակ պատշգամբի վրա – վերի և վարի հարկերում – շարքով ընկած են երկու տասնյակի չափ սենյակներ, որոնց դռների ճակատին՝ կարմիր կտավների վրա, սպիտակ տառերով գրված են.

Նահանգային վարչություն	*Բանտային վարչություն*
Նահանգապետի դիվանատուն	*Քաղաքապետարան*
Գավառային վարչություն	*Քաղաքապետի դիվանատուն*
Տնտեսական մարմին	*Ոստիկանական տեսչություն*
Դատարան	*Ոստիկանապետի դիվանատուն*
Ընդհանուր դատախազություն	*Ոստիկանների կացարան*
Հաշտարար դատարան	*Բանտ և այլն, և այլն*

Այս հիմնարկությունները փոքր էին, յուրաքանչյուրում աշխատում էին 2, 3, ամենաշատը 4 հոգի, գրասենյակներն անշուք էին, անզարդ, կահավորությունն այլազան էր ու հնամաշ, բայց մեծ էին դրանց բովանդակությունը, դրանց ֆունկցիաները:

Բռնությունների մեջ իր կյանքը մաշած մեկ փոքրիկ ժողովուրդ մեկեն ըմբոստացել էր, զենք էր վերցրել և տապալել իրեն բռնացող ուժը, ծանր պայքարից դուրս էր եկել ավերված ու բզկտված և անցել էր շինարար աշխատանքի՝ վերաշինելու ավերվածները, կառուցելու նոր կյանք և լուծելու իր առաջ ծառացած բազմաթիվ խնդիրները: Եվ այդ հիմնարկություններում եռում էր աշխատանքը: Ամենքը – այդտեղի աշխատողները – ծանրաբեռնված աշխատանքներով գրում էին, հաշվում, լսում, պատասխանում, բավարարում էին բազմաթիվ դիմողներին ու խնդրատուներին, և այդ բոլորը կատարում էին անձանձրույթ, անտրտունջ և այն գիտակցությամբ, որ իրենք կոչված էին ծառայելու մեկ վեհ գաղափարի:

Պտույտ եմ գործում այդ նոր ստեղծված հիմնարկություններում, դիտում եմ դրանցում տարվող աշխատանքը և դուրս եմ գնում մեծ գոհունակությամբ:

Այցելում եմ իր բնակարանում այդ նորաստեղծ կառավարության ղեկավարին, այդ օրերի հերոսացած անձին – Արամին, իր ընկերներից այն բախտավորին, որը կենդանի մնաց և հանդիսացավ ղեկավար Վանի ազատագրմանը: Իմ զրույցն Արամի հետ երկար տևեց, և ես դուրս եկա նրա մոտից հոգեպես մխիթարված:

Դուրս եկա Արամի մոտից մխիթարված, հայացքս նորից ձգեցի ազատագրված քաղաքի վրա, փռվեցին առաջս ավերված թաղերի փլատակները և այդ փլատակների միջից ծագող լուսավոր պատկերները:

Ահա Սևոն – Իսկուհի Համբարձումյանը – Այգեստանի հերոսուհին, որը գաղտագողի մոտենում է թշնամու դիրքին, լրտեսում է այն և վերադառնում է՝ արհամարհելով մահը:

Ահա մի կին – Աղավնի Վարպետյանը – Քաղաքամեջի հերոսուհին, որը թշնամու գնդակների տակ, վերցրած ջրով լի դույլը, նետվում է, դիրքի տակ բռնկված հրդեհը հանգցնում ու կենդանի վերադառնում:

Ահա Քաղաքամեջի հերոս պատանիները – 12–14 տարեկան Ասլանը, Ոստանը, Բաբկենը նետվում են միջնաբերդից նետված ռումբերի վրա, վայրկենապես ձգումհանում են վառվող պատրույգները և դրանց դարձնում են պայթյունից զերծ:

Ահա այն սիմվոլը, որ սավառնում էր Վանի ավերակների վրա:

Վանն ուսումնասիրելուց հետո, Վան, որն իր բոլոր անցուդարձերով ինձ վրա թողել է մխիթարական տպավորություն, որոշեցի այցելել Շատախ և մի քանի այլ շրջաններ: Առիթը հանդիսացավ ինքնին: Շուտով հայտնի դարձավ, որ կամավորական գնդերով ճակատ են մեկնում մի քանի պաշտոնական անձինք, որոնց թվում նաև այդ ժամանակվա Կովկասի հայ մամուլում քննադատի անուն հանած Ն[իկոլ] Աղբալյանը: Ես որևէ պաշտոն չունեի և շրջում էի որպես տուրիստ: Չնայած դրան, երբ ես հայտնեցի իմ ցանկությունը նրանց միանալու, ոչ միայն համաձայնեցին,

այլև տրամադրեցին ինձ մեկ ձի: Եվ հունիսի 28-ին 7–8 հոգուց բաղկացած հեծյալ խմբի հետ ճանապարհ ընկանք դեպի ճակատ:

Կամավորական գնդերն այդ միջոցին գտնվում էին Վանի լճի հարավային – - Կարճկանի գավառի բարձունքներում:

Առաջին բնակավայրը, ուր մենք մեկ ժամ կանգ առանք, այդ պտղառատ Արտամետն էր՝ Վանի լճի հարավարևելյան ափին բանաստեղծական մեկ դիրքի վրա բազմած: Դրանում ապրում էին 120 տուն հայեր և 350 տուն տաճիկներ: Ապրիլի 8-ին մասսայական ջարդերի ժամանակ զոհ էին գնացել 130 մարդ, կին, երեխա: Տեղի էր ունեցել զինված դիմադրություն և, շնորհիվ դրա, բավական թվով երիտասարդներ կռվելով թողել էին գյուղը և փրկվել ջարդերից:

Արտամետից հետո շարունակելով ճանապարհը՝ երեկոյան ժամը 6-ին հասանք Գավաշի գավառի կենտրոն Ոստան ավանը. դա ընկած էր բուսականության մեջ թաղված ընդարձակ հովտում՝ առաջը փռված Վանի լճի կապուտակը՝ կռնակին ունենալով Արտոս լեռան հեռավոր լանջերը:

Երկու ամիս առաջ այստեղ իշխում էր Ոստանի կայմակամ Շուքրի բեյը, իսկ այժմ Ոստանի գավառապետ, Շատախի մեկ թևի՝ Փեսանդաշտի դիմադրության ղեկավար Լևոն Շաղոյանը[6]՝ ինձ համար նոր դեմք: Ոտք էինք դրել հայկական գավառի կենտրոնավայրը և մեզ սպասարկում [ընդունում] էին հայ գավառապետի հայ պաշտոնյաները – հուզիչ մոմենտ:

Երբ փոքր-ինչ հանգիստ էինք առել, ինձ մոտ եկավ գավառապետը և հարց տվեց՝ արդյո՞ք ես հիշում եմ իրեն: Ես տվի բացասական պատասխան, նա նորից հարց տվեց՝ արդյո՞ք հիշում եք, երբ 1909 թվին Դուք ճանապարհորդելիս Խարականից Խորգոմ գյուղ գնալու համար կանգ էիք առել Խոշաբ գետի ափին և, անծանոթ լինելով գետի ծանծաղուտին, դժվարանում էիք ջուրը մտնել, մեկ երիտասարդ մոտեցավ Ձեզ, առաջարկեց իր ծառայությունը և, առաջարկելով Ձեզ հանվել, առաջ ընկավ և Ձեզ անցկացրեց գետի մյուս ափը, – «Այո՛, լավ հիշում եմ»,– պատասխանեցի ես»,– «Այն երիտասարդը ես եմ»,– հայտարարեց գավառապետը և ձեռքս սեղմելով՝ իր ուրախությունը հայտնեց երկրորդ անգամ հանդիպելու համար: Անցած տարիների հիշողությունը և հազվադեպ զուգադիպությունը ոչ միայն ուրախություն, այլև անասելի հուզմունք պատճառեց ինձ: Որքա՜ն, որքա՜ն քաղցր էր այդպիսի հանդիպումը, այն էլ այսպիսի բացառիկ պայմաններում:

Գավառապետը նստեց իմ կողքին և տվեց ինձ շատ հետաքրքրիր տեղեկություններ Փեսանդաշտի կռիվների մասին, նաև Ոստանի ներկա դրության մասին: Այդ միջոցին Ոստանում ապաստան էին գտել ավելի քան 4000 փախստականներ, որոնք եկել էին Սպարկերտ, Մամրտանք, Կիզան, Կառկառ, Բարվար և Կարճկան շրջաններից:

Գավառապետի հետ մեր զրույցը շարունակվում էր, երբ հայտնեցին, որ խումբը պատրաստվում է ճանապարհ ընկնել, սեղմեցի գավառապետի

---

[6] *Լևոն Շաղոյան (1887–1973) – ՀՅԴ անդամ: Վանի նահանգապետության շրջանում նշանակվել է Գավաշի գավառապետ: Վասպուրականից 1918 թ. մարտյան նահանջից հետո հաստատվել է Բաքուբայում (Իրաք):*

ձեռքը, դուրս եկա, միացա խմբին և մեկ ժամից հետո իջանք Ախավանք և այդտեղ էլ գիշերեցինք:

Վանա լճի չորս կողմներից նշանավոր է Աղթամարը, այդտեղ է կառուցված Աղթամարի վանքը և Աղթամարի կաթողիկոսարանը: Աղթամարի վանքը Տաճկաստանի [Արևմտյան Հայաստանի] վանքերի շարքում մեծ տեղ է գրավել: Հայտնի էր իր տնտեսությունով և իր դպրոցով. դրանք գետեղված են լճի ափում բուսազարդ և ընդարձակ տափարակի վրա, որը կոչվում է դրսի տուն, նաև Ախավանք:

Ախավանքի տնտեսությունը վարում էր Դանիել վարդապետը՝ գործունյա և աշխույժ մարդ: Սա Վանի կռիվների ժամանակ գտնվում էր Քաղաքամեջ, մասնակցել էր կռիվներին, որի շնորհիվ կենդանի էր մնացել, ըստ որում, ջարդերից ազատ չէին մնում հոգևորականները:

Հունիսի 29-ի առավոտյան ժամը 10-ին մեկնեցինք, գնում էինք դեպի Կարճկան: Կտրում էինք փոշոտ, հաճախ քարքարոտ տարածություններ, կատարում էին[ք] ելևէջներ, գնում ենք երկար, բայց մարդկանց չենք հանդիպում:

Անցնում ենք Անգյալուր գյուղի տակով: Գյուղը կպած է մեկ բլուրի կրծքին, գյուղի տակով հոսում է գետակ, իսկ գետակի ձախ ափով ձգվում է ճանապարհը. գետակի ափին ընկած է մեկ կնոջ դիակ, սա հայ կնոջ դիակ է մեջքի վրա պառկած, ոտները դեպի արևելք, իսկ ձեռքերը կրծքին, ըստ երևույթին, որևէ անցորդ հայ կատարել է իր քրիստոնեական պարտքը:

Հանդիպում ենք մի այլ պատկերի. Շիբուր կոչվող գյուղի դիմաց՝ մի փոքր հեռու, գտնվում է մի կիսավեր ջրաղաց և ավերակ խանութ: Այդ խանութում կողք կողքի ընկած են երկու դիակներ՝ մեկը կնոջ, մյուսը շան. մարդու արժեքը հավասարվել է կենդանու արժեքի:

Շարունակում ենք ճանապարհը, թևակոխում ենք Ս. Հակոբի լեռնանցքը, արևմտյան լանջին – մեկ պտույտի վրա նորից ընկած է մեկ կնոջ դիակ – մեջքի վրա, ոտները կուչ եկած, ձեռքերը տարածված, մազերը խռիվ, դեմքն այլակերպված: Որքան տանջվել է այդ կինը մինչև անշնչանալը: Եվ որքան ընկել են այդպիսի տանջանքներով:

Մոտենում ենք Հակյուլ կոչվող կատարին, սրա հարավային լանջում ընկած է Նանեկանց հայկական գյուղը. ժողովուրդ չկա, գյուղը հրդեհված է:

Ժամը 3-ն է, մեկ վերելք կտրելով դուրս ենք գալիս բարձր դիրքի վրա, առաջներս բացվում է փոքրիկ ծովախորշ, որի լանջերի մեկ հարթակում ձգված է Զեյվա գյուղը: Զեյվայի շուրջը մեկ օր առաջ տեղի է ունեցել տաք կռիվ. այդ տեղից ոչ շատ հեռու, բլուրների հետևից լսվում էին թնդանոթային որոտները, և երկինք էր բարձրանում հրդեհված գյուղերի ծուխը:

Օրը գլորվում էր, կատարեցինք նոր ելևէջներ և դուրս եկանք մեկ բարձրավանդակի վրա, բացվեց առաջներս ընդարձակ, խոտավետ հովիտ, այդ Եղեգիս գյուղի դաշտն էր, որում կանգ էր առել զինվորական աբոզը [գումակը], խփել էին մեկ վրան և նրա մեջ տեղավորել էին հիվանդներին:

Վրանից փոքր-ինչ հեռու վառվում էր խարույկը՝ բոց ու ծուխ արձակելով: Այդ խարույկի շուրջն էլ գիշերեցինք: Այդտեղ սատկեց մեր մեկ ձին:

Հունիսի 30-ի առավոտյան ժամը 6-ին թողինք հյուրընկալ հովիտը, ճանապարհ ընկանք և, երկար տարածություններ չափելով, հասանք մեկ աղբյուրի, որը բխում էր ժայռերի միջից: Այստեղ ահա առաջին անգամ հանդիպեցինք կամավորական գնդերից մեկին. այստեղ բանակ էր դրել Անդրանիկի գունդը: Այդտեղ էր նաև Անդրանիկը՝ մեկ փոքրիկ վրանում նստած. նա մեզ ընդունեց լավ տրամադրության տակ, տեսքով առույգ էր, խոսում էր պարզ, անպաճույճ ու հատուկ շեշտով: Մեկ օր առաջ ջարդ էին տվել տաճիկներին և վերցրել էին 4 թնդանոթ:

Անդրանիկի գնդի բանակատեղից դեպի հարավ գտնվում է Վանիկ գյուղը, որի տակ՝ արտերի մեջ խփված վրանում, հանդիպեցինք Վարդանին, Դրոյին, Քեռուն և Խեչոյին: Մեր խմբից նրանք, որոնք ճակատ էին եկել հանձնարարություններով, առանձնացան խորհրդակցելու, իսկ ես դուրս եկա հետաքրքրվելու զինվորների կենցաղով ու նրանց՝ թշնամու հետ ունեցած հանդիպումների տպավորություններով, և մինչդեռ շրջում էի վրանից վրան, մի խումբ զինվորներ մոտեցան՝ առաջ արած երեք գերիներ: Դրանք [ազգությամբ] արաբ զինվորներ էին՝ խակի գույնի հագուստով: Դրանցից մեկն աչքի էր ընկնում իր բարձր հասակով, դաժան դեմքով և որը համառ կերպով խուսափում էր տրված հարցումներին պատասխանել: Ինչ վերաբերում է մյուս երկուսին՝ նրանք վախի ազդեցության տակ բոլոր հարցումներին տալիս էին լրիվ պատասխան և պատմում երկու-երեք օր առաջ տեղի ունեցած Բիթլիսի հայկական ջարդերի մասին:

Մեկեն հրաման ստացվեց կատարել զորքի տեղաշարժ, շտապ վրանները հավաքեցին, զինվորները վերցրին հրացաններն ու պայուսակները, շարժվեցին. մեր խումբը նույնպես շարժվեց: Հետադարձ մեկ վայրէջք մեզ հանեց ինչ-որ թերակղզու վրա, դրա ափին գտնվում է Սորբ գյուղը, շարժվում ենք լճի պտույկեն ափերով. ճանապարհը բռնված է զորքի տեսակներով՝ թնդանոթաձիգ, հետևակ, հեծյալ, նաև սիբիրական մասեր գալիս-անցնում են երկարուերկար, տեսարանը հետաքրքիր է ու ոգևորիչ: Նորից ծովախորշ և պտույտներ և դուրս ենք գալիս Խարձիթ գյուղի սահմանը՝ ծառազարդ, մինչ այդ ճանապարհի տակ մեկ փոսի մեջ կուտակված են երեսունի չափ թշնամու զինվորների դիակներ, դրանց վրա դիզված են չորացած բույսեր և ծառերի ճյուղեր. անշուշտ, դիակներն այրելու համար, բայց դա չի կատարվել:

Գիշերում ենք բաց դաշտի մեջ:

Հուլիսի 1-ն է, առավոտյան ժամը 6-ը. ընդարձակ տափարակի վրա կյանքը եռում է, այստեղ են կամավորական գնդերը, հրետանին, հեծյալ, նաև սիբիրական մասերը, չորս կողմը խարույկներ, եռացող փոքրիկ կաթսաներ: Բանակը պատրաստվում է շարժվելու:

Հեռվում այրվում է Ավաթաղը, նաև Ախկյուզը, ծուխը լայն շերտով բարձրանում է վեր, զորքի հետ շարժվում ենք նաև մենք:

Ժամը 9-ին հասնում ենք Խնձորկեն՝ թևակոխելով Պաշվան՝ հայ և Կորտկան՝ քյուրդ գյուղերը, մեկ օր առաջ այդ շրջանում տեղի է ունեցել ճակատամարտ, թշնամին նահանջել է՝ խուճապահար ձգելով ամեն ինչ,

ամբողջ ճանապարհը ծածկված է իրերով՝ վրաններ, շարժական մահճակալներ, աթոռներ, թիթեղյա ամաններով նավթ, դեղերով լի արկղեր և անհատական իրեր:

Խնձորկենն՝ ընկած գեղեցիկ ծովախորշի վրա, ունի լավ տներ, դպրոցի լավ շենք, գյուղի դիմաց կան պտղատու ծառեր, գյուղից լճի հյուսիսարևմտյան ափերի վրա երևում են Ծորկոնք, Դատվան և Ուրթաբ բնակավայրերը: Խնձորկենը, ինչպես և մեր տեսած բոլոր գյուղերը, ամայի է: Մտնում ենք մի քանի տներ, հատակները փորված-խուզարկված են, մեկ ախոռում նստած մի գեղեցիկ երինջ մեզ տեսնելով վեր է թռչում նստած տեղից և սարսափած այս ու այն կողմն է նետվում. խեղճ կենդանին վայրենացել է և միակ կենդանի շունչն է գյուղում. այդ անմեղ կենդանու սարսափած հայացքը և միայնությունը խիստ հուզիչ էր:

Անդրանիկի գունդը շարժվեց և մի բարձրունքի վրա ճակատ կազմեց, մեր խումբը նույնպես շարժվեց և առաջացավ մինչև ճակատ:

Վանի ու Բիթլիսի վիլայեթների սահմանը ձգվում է ձորով, որի միջով հոսում է Թուխ գետը և թափվում Վանի լճի մեջ նրա հարավարևմտյան ծովախորշում: Մենք գտնվում էինք սահմանը գծող ձորի արևելյան բարձրունքի վրա, իսկ արևմտյան բարձրունքները բռնած ուներ թշնամին:

Չնայած այդ բանին՝ մեր խումբը ցանկություն հայտնեց իջնել դեպի գետը, մեզ առաջնորդեցին տեղանքին ծանոթ կամավորները: Իջանք բարձրունքից, մտանք գետն ու անցանք և մի փոքր բարձրանալով՝ կանգ առանք Թուխ գյուղի կենտրոնում: Գյուղի փողոցներում թափթփված էին հազար ու մի իրեր՝ անկողին, բուրդ, մանվածքներ, յուղ, պանիր, ցորեն և նույնիսկ՝ բարձած սայլեր: Ինչպես պարզվեց, մեկ օր առաջ այդ գյուղում տեղի էր ունեցել ժողովրդի տեղահանություն ու ջարդ: Գետն անցնելիս քարերին և ջրաբույսերին դեմ առած համբրեցի յոթ տղամարդկանց դիակներ: Դրանք բոլորովին մերկ էին, ձյունի պես սպիտակ. մասսայական ջարդերին զոհ գնացած հայերի դիակներ էին: Այդ պատկերն ահա ամբողջական դարձավ, երբ Թուխ գյուղի մեջ կանգնած շրջակայքն էի դիտում, տանից դուրս եկավ մեկ պառավ կին՝ մազերը խռիվ, դեմքն այլայլված և սարսափ կոխած, այս ու այն կողմը նայեց և երբ մեզ նկատեց, շտապ հետ դարձավ ու տուն մտավ: Մենք ձայն տվինք, կանչեցինք. «Մի՛ վախենա, մենք հայեր ենք, քեզ ոչինչ չենք անի»,– կրկնեցինք նույն խոսքերը մի քանի անգամ, բայց նա կանգ չառավ: Այս պատկերն ինձ շանթեց, իմ խիղճը երբեք ինձ այնպես չէր տանջել, ինչպես այժմ: Դա հայ կին էր, անշուշտ, ամուսնու, տղաների տեր, տաճկական սուրը, անշուշտ, խողխողել էր ամուսնուն ու տղաներին, վիշտը հարվածել էր մայրական սիրտը, և ամայացած գյուղի մեջ որոնում էր հարազատներին՝ խելագարված:

Այս սիրտ կոծող մտածմունքի մեջ էի, երբ ականջիս հասավ ահազանգող զգուշացում. «Տղանե՛ր, վերադառնանք, թշնամին մոտ է, ծուղակի մեջ կընկնենք»: Շտապ ձիերի գլուխը դարձրինք, նույն դիակների մոտով գետն անցանք ու երբ բարձունքին հասանք ու հետ նայեցինք, նոր միայն նկատեցինք թշնամու հետախույզ ջոկատի շարժումը Թուխ գետից փոքր-ինչ վեր:

Երբ մթնում էր, Անդրանիկի մեկ վաշտը երկու լեռնային թնդանոթով գրաված ուներ մի դիրք, որտեղից պարզ երևում էր դեպի հյուսիս ընկած բլրաշարքի վրա թշնամու գոտին: Անդրանիկը, հեռադիտակն աչքերին, նշան տվեց թնդանոթաձիգ սպային, վերջինս, հեռավորությունը չափելով, մեկ թնդանոթը որոտաց, և ռումբն ընկավ թշնամու գոտուն չհասած. երկրորդ, երրորդ ռումբերն ընկան թշնամու գոտում, որից հետո թշնամու գոտու ամբողջ երկարությամբ սկսեցին ճարճատել հազարավոր հրացանների համազարկերը, որոնց կրակը խտացող մթության հետևանքով լուսավորում էր թշնամու գոտին:

Այդ մոմենտին Անդրանիկը հիշեց իր անցյալից մեկ դեպք և սկսեց պատմել 1904 թվին Գրգուռի մոտ տաճկական զորքերի հետ ունեցած կռվի մանրամասնությունները: Նշանակալից օր, հին հերոսը և պատմական վայրերը:

Տաճիկները բռնեցին Ուրթաբի կատարն իր լանջերով, նորից ձայնակցեցին թշնամու համազարկերը և լռեցին, խավարը բոլորովին պատեց, մենք իջանք Խնձորկեն:

Հազիվ մի փոքր հանգիստ էինք առել, երբ Ուրթաբի թիկունքից մեկեն լսվեցին համազարկեր, որոնք երկար շարունակվում էին: Բոլորս վեր թռանք:

«Հայերին կոտորում են»,– բացականչեց Անդրանիկը: Նրա մեջ խոսեց բնազդը: Հունիսի 29-ից սկսվել էր Մուշի դաշտի կոտորածը:

Հուլիսի 2-ն է, ժամը 7-ը, ընդարձակ տափարակ, արտերի մեջ արածում են ձիերը, զինվորներն այս ու այն կողմը խարույկների վրա եփում են թեյ, սաջի վրա թխում են հաց, ոմանք էլ մաքրում են զենքերը: Քիչ հեռու՝ իր վրանում, Անդրանիկը Կայծակ Առաքելի հետ թեյ է խմում: Մի այլ տեղ՝ մեծ ընկուզենու տակ, ուտում, խմում և զրուցում են Վարդանը, Խեչոն, Աղբայյանը, Գյուզալյանը, Արարատյանը՝ շրջան կազմած:

Անդրանիկը հրաման է ստանում սպասել: Հայտնում են, որ լճի հյուսիսային կողմի բանակը հասել է կամուրջ: Անդրանիկը դժկամում է. «Էլի մեզ դատապարտեցին անգործության»: Հին հեղափոխականի հոգեբանություն՝ հառաջ:

Մեր խումբը, վերջացած համարելով իր աշխատանքը, հրաժեշտ տվինք կամավորական բանակի ղեկավարներին և բռնեցինք վերադարձի ճանապարհը:

Կեսօր է, հասնում ենք Պաշվանց և Կորտկան, վերջին գյուղից մի փոքր վեր՝ խոտավետ տափարակի վրա է եղել թշնամու դաշտային հիվանդանոցը, թափված են այդտեղ անհամար իրեր, նաև մեծ քանակությամբ փամփուշտ:

Կորտկանից դեպի հարավ մեկ ժամ հեռավորությամբ մեկ սիրուն հովտի մեջ հանգիստ է առել Քեռու գունդը, բացում ենք ջերմ զրույց հինավուրց հեղափոխականի հետ և ապա տալիս ենք հրաժեշտ: Շարունակում ենք ճանապարհը և կանգ ենք առնում Ջոլու գյուղի մոտ. այստեղ են Դրոյի և Համազասպի գնդերը: Որոշում ենք գիշերել այստեղ, բայց դեռ ժամանակ շատ կա: Իմ ընկերները զբաղվում են իրենց աշխատանքով, իսկ ես զբաղվում եմ տխուր պատմություններ լսելով:

Լեռներից նոր իջել են մայր և դուստր և հանդիպել են իրենց մեկ հարազատին՝ իրենք էլ հյուծված ու մաշված:

Մայրը՝ Սիմե՝ 45 տ[արեկան], դուստրը՝ Գոզե՝ 8 տ[արեկան]: Սրանց ընտանիքը բաղկացած էր 17 հոգուց, այդ 17-ից 14-ը չկան՝ սպանվել են, առևանգվել են և կորել են, մնում են այս երեքը: Նրանց գյուղը բաղկացած էր 15 տնից, նրանք բոլորն էլ ենթարկվել են նույն վիճակին: Այս Սիմեի երկար, շատ երկար պատմության ամփոփումն է:

Պատմում է Թուխի գյուղացի Ռուբեն Մելքոնյանը.

«Վանից փախած տաճիկ պաշտոնեությունը, զորքը և չեթեները, երբ հասան մեր կողմերը, կազմակերպեցին թալան, բռնություն և ջարդեր, նախ Դատվանում, ապա նավարարների մեջ: Միաժամանակ Ուղտի քարերի մոտ կոտորեցին 1000-ից ավելի տղամարդ, իսկ սրանից 4 օր առաջ զարկեցին Թուխը, Ախկրձորը և Ուրթաբը»:

Պատմում է Կայծակ Առաքելը, թե ինչպես ինքը Կենդրանց գյուղում ջրաղացի մոտ, մեկ ծառի տակ տեսել է 25-ի չափ կանանց ու երեխաների գնդակահարված ու մորթոտված դիակներ:

Հուլիսի 3-ն է, հետադարձ կտրում ենք մեր եկած ճանապարհը, երեք օր շարունակ շփվում էինք բանակի հետ՝ հաղթական բանակի, տեսնում էինք նրա անցած ճանապարհը, տեսնում էինք նաև պարտված թշնամու փախուստի հետքերը, ճանապարհներին ձգած գույքը, իրերը և այդ բոլորը ներշնչում էին հույս. միաժամանակ ցցվում էին առաջս ավերված, ամայացած գյուղերի, այսուայնտեղ ընկած, գետերի հոսանքին նետած դիակների գազանային ջարդերի պատկերները, և այս բոլորը ներշնչում էին թախիծ և այսպես՝ մեկ հույս, մեկ թախիծ, մեկ ուրախ, մեկ տխուր մտքերը զբաղեցրել էին ինձ այն աստիճան, որ ես չէի նկատել, թե ինչպես մենք կտրել-անցել էինք ահագին տարածություններ, օրը գլորվել էր աննկատելի և թե ինչպես ընկերներս, կանգ առնելով մեկ խոտավետ հովտի եզրին, որոշում էին գիշերել այդտեղ:

Հուլիսի 4-ն է, ճանապարհ ենք ընկնում շատ վաղ, արևելքը նոր-նոր միայն ճառագայթում է, գնում եմ, մտքումս վերլուծելով մի շարք տվյալները, որ նշված են ծոցատետրում և որոնք վերաբերում են նոր շրջագայածս վայրերին:

Գավաշի շրջանում հաշվում են 24 հայաբնակ գյուղեր՝ 1200 ընտանիքով և 7000 բնակչով: Կարճկանի շրջանում հաշվում են 27 հայաբնակ գյուղեր՝ 850 ընտանիքով և 6500 բնակչով: Գավաշի շրջանում աչքի ընկնող գյուղերն են Նարեկը, Մոխրաբերդը, Փայխները, Բելուն, Փշավանցը, Պախվանցը: Կարճկանի շրջանում աչքի ընկնող գյուղերն են Օրանցը, Եղեգիսը, Օղվանցը, Խնձորկենը, Սորբը, Խարձիթը, Գոմսը, Պաշվանցը և այլն:

Այս երկու շրջաններն, իրենց բուսականությամբ, պտղատու ծառերով, անտառներով ու կլիմայով, Վանի լճի ավազանի լավագույն շրջաններն են:

Ես ոտք դրի Գավաշի սահմանը հունիսի 28-ին, ոտքս դուրս եմ դնելու այդ սահմանից հուլիսի 5-ին: Յոթ օր շրջագայեցի այդ երկու շրջաններում, անցա ավելի քան 15 գյուղերի միջով և սահմաններով և ի՞նչ տեսա.

ամեն տեղ ամայություն, լռություն, տեղ-տեղ միայն շներ, սակայն, որոնք վայրենացած, երբ տեսնում էին մեզ, բարձրացնում էին սոսկալի ոռնոց և սարսափած փախչում էին դեպի լեռներն ու անտառները:

Ահա այն մտքերը, որոնցում խորասուզված անցել էինք ահագին տարածություն, ոտք էինք դրել Զեյվայի ձորը ու բարձրացել մեկ հարթության վրա: Գնում եմ առաջ՝ նույն մտքերի մեջ խորասուզված, ձիս էլ, կարծեք շրջապատի ամայությունից ազդված, աննկատելի դանդաղեցրել է քայլերը, իսկ հետևից 10–20 քայլի վրա գալիս է Աղբալյանը: Մի վայրկյան սթափվեցի և գլուխս բարձրացրի և մեկեն հեռվում Առանց գյուղի մեկ տանից նկատեցի բարձրացող ծուխը: Այդ ծուխն այնքան անսպասելի էր և այնքան հուզիչ, որ ինքնաբերաբար իմ շրթունքներից դուրս թռան երեք բառեր՝ «Պարո՛ն Աղբալյան, ծո՛ւխ», և ձեռքս պարզեցի դեպի ծուխը: Այդ խոսքերի վրա սիրտս սկսեց թրթռալ, այդ ուրախության թրթիռն էր: Յոթ օր ճախրում էի հայաբնակ վայրերը, ոչ մի տեղ բնակչություն չէի տեսել և հանկարծ տեսնում էի հայ ընտանիքի տան երդիկից բարձրացող ծուխը: «Ո՛չ, հայրենիքի ծուխը դեռ չի մարել»,– մտմտացի ես:

Ինձ և մանավանդ Աղբալյանին բաժին էին ընկել դանդաղաշարժ ձիեր, այդ պատճառով էլ մեր ընկերները բավականին առաջ էին գնացել, և որպեսզի կարողանայինք նրանց հասնել, ստիպվեցինք դիմել մտրակների օգնությանը և հասանք նրանց, բայց ձիերին տանջելով:

Որոշել էինք գիշերել Ախավանքում, իսկ մինչև Ախավանք ահագին տարածություն ունեինք կտրելու, ուստի գնում էինք առանց կանգ առնելու, մի տեղ միայն կանգ առանք և այն էլ կարճատև. դա այն ավերակ խանութի շենքն էր, որտեղ կողք կողքի ընկած էին մեկ կնոջ և մեկ շան դիակներ, այդ դիակներն այլևս չկային:

Արեգակը բոլորովին գլուխը կախել էր, երբ մենք հասանք Ախավանք:

Հուլիսի 5-ն է: Աղթամար-Ախավանքը պատմական դեպքերի վայր է՝ նաև հյուրընկալ, չենք շտապում թողնել այդ վայրերը: Այդտեղ հանդիպում ենք Բեկգուլյան[7] քահանային, որը գնում է ճակատ: Կան զանազան շրջաններից մարդիկ, ամեն մեկը նրանցից կրում է իր մեջ ողբերգություն, որքան ցանկանաք կլսեք նրանցից ջարդերի պատմություններ: Այդ պատմությունները լսելու այլևս ջղեր չեն մնացել և ոչ էլ՝ գրի առնելու համբերություն:

Ախավանքից մեկ ժամի հեռավորության վրա գտնվում է Նարեկ գյուղը, նաև Նարեկի վանքը, իսկ վանքի ներսում՝ հատուկ խորանում, գտնվում է տասնմեկերորդ դարի անզուգական պատմագիր ու բանաստեղծ Գրիգոր Նարեկացու գերեզմանը:

Այստեղ Աղբալյանը ցանկություն հայտնեց այցելել Նարեկացու գերեզմանը, ընկերացա նրան, թեև իմ առաջին ճանապարհորդության ժամանակ ես այցելել էի այդ նվիրական շիրիմը: Բայց նախքան գնալը, Աղբալյանը մտավ դպրոցը, այդտեղից վերցրեց մեկ օրինակ «Նարեկը» և ապա շարժվեցինք: Եվ երբ տեղ հասանք, Աղբալյանը մոտեցավ գերեզմանին, հանեց գլխարկը, բացեց «Նարեկի» գլուխներից մեկը և սկսեց կարդալ այդ

---

[7] *Ռուբեն ավագ քահանա Բեկգուլյանց (1873–?) – 1915 թ. փետրվարի վերջից՝ հայ զինվորական հովիվ:*

գլուխն այնպիսի ոգևորությամբ և այնպիսի շնչով, որպիսին հատուկ է վեհ գաղափարներով տարված մեկին: Այդ վայրկյանին ամեն ինչ մոռացած՝ նա անէացել էր և ինձ թվաց, որ իմ առաջ կանգնած է միջին դարերի միմիայն հոգեպես ապրող միստիկը. չէ՞ որ միջին դարերի բարբարոսների վայրագություններն իրենց ամայացումներով ցցված էին մեր առաջ: Չգիտեմ՝ ինչու դեպի այդ մարդը ես տածեցի հարգանք. մարդ, որն այդ վայրկյանին տարված էր մեր միջնադարյան լուսագեղ կուլտուրայով:

Այս նույն օրը Ախավանքը թողեցինք և ժամը 6-ին իջանք Ոստան: Իմ առաջին հոգսը եղավ շեղվել ընկերներիցս և այցելել Շատախ՝ Թաղը, բայց ինչ կերպ, իմ տակի ձին պետք էր վերադարձնել Վան. վստահ Լևոնի՝ դեպի ինձ ցուցաբերած վերաբերմունքին՝ դիմեցի նրան և հայտնեցի իմ մտադրությունը:

«Ես կտրամադրեմ Ձեզ մեկ ձի և ուղեկցող մեկ մարդ»,– պատասխանեց նա:

Հաջորդ օրը, հուլիսի 6-ին՝ երեկոյան ժամը 5-ին, մեկ նոր ձի նստած՝ կողքիս էլ Ոստանի երիտասարդ ոստիկաններից մեկը, սեղմեցի բարեկամիս ձեռքը և ճանապարհ ընկա դեպի Թաղ: Գծելով Արտոսի հարավարևմտյան լանջերը՝ մտանք Ասկանի նեղ ու խորունկ քարքարոտ ու երկար անցքը, դուրս եկանք մեկ վճիտ աղբյուրի մոտ և, մեծ դժվարությամբ բարձրանալով Բարատոտիկի կատարը, իջանք Փեսանդաշտ կոչվող հացառատ հովիտը և, կտրելով այդ հովտի երկարությունը, կանգ առանք Առեղ գյուղում և այդտեղ էլ գիշերեցինք:

Հուլիսի 7-ին վաղ առավոտյան թողինք Առեղը և ճանապարհ ընկանք: Ժամը 10-ին դուրս եկանք Շահրուրա բերդ կոչվող տեղը, իսկ մեկ ժամից հետո հասանք Սիվտրկնա գյուղը, որտեղից արդեն սկսվում էր Թաղ տանող խորունկ և պտույտներ գործող ձորը:

Այս ձորի մեկ պտույտի վրա լեռան կրծքից ժայթքում է Շատախի զարդը կազմող ջրվեժը՝ Սպիտակ ջուրը, որի փոշիացած ալիքն արեգակի ճառագայթների տակ փոխվում է հաճելի գեփյուռի: Թևակոխելով սպիտակ փրփուր կերտող այդ հրաշագեղ ջրվեժը և կտրելով նորից երկար տարածվող ձորամեջը՝ մուտք եմ գործում ընդամենը 220 տուն բնակիչ ունեցող, ինքը փոքր, բայց իր տարած պայքարով մեծ անուն վաստակած ավանը:

Վանից ավելի տևական և ավելի աննպաստ պայմաններում[8] հերոսական պայքար տարած Թաղը չէր կարող անվնաս մնալ և, իսկապես, այդ փոքրիկ ավանի մեծ մասը ավերված էր, փոքր մասը միայն պահպանել էր իր գոյությունը: Դիտել պայքարի կրակակետերը, այցելել մի երկու հիմնարկությունները, մեծ ժամանակ չէր պահանջում: Այդ ամբողջը հնարավոր էր ընդգրկել 2–3 ժամերի ընթացքում, սակայն երկար էր պայքարի պատմությունը: Հերոսական ակտերի նկարագիրը, որին ականատես և մասնակից մեկ երիտասարդ դիմավորեց ինձ, երբ Շատախի գետի մեկ ճյուղի վրա ձգված փայտյա կամուրջից անցնելով՝ դիմեցի կառավարության տունը:

---

[8] *1915 թ. ապրիլի 1-ից մայիսի 14-ը տեղի են ունենում Թաղի ինքնապաշտպանական մարտերը: Թաղը բաժանվում է ութ դիրքերի՝ 114 մարտիկներով: Հակառակորդի թիվը հասնում էր մոտ երկու հազարի:*

Անուն-ազգանունով Տիգրան Բաղդասարյան[9], բնիկ թաղեցի, որը Պոլսում զինվորական կրթություն ստացած և սպայի պաշտոնով պատերազմին մասնակցած՝ Քյոփրի Քյոյի ճակատամարտում վիրավորվում է, բժշկվում և արձակուրդ ստանալով վերադառնում է իր ծննդավայրը ու մասնակցում Շատախի պայքարին:

Ես լսեցի Բաղդասարյանին մեկ ամբողջ օր ու գիշեր: Նա պատմեց պայքարի բոլոր մանրամասնությունները, թվեց հերոսական ակտերը, թե ինչպես 12 տարեկան մեկ աղջիկ՝ Սրբոն, թշնամու գնդակների տակ նամակ է հասցնում վտանգված Սողվանց դիրքի տղաներին և պատասխան բերում: Թե ինչպես Շատախի մի այլ հերոսուհի՝ 50 տարեկան Ասմարը, հանձն է առնում թշնամու կողմից վտանգված ահռելի ձորը. գիշերով կտրել ու անցել է Սիվտրկնա՝ տղաներին նամակ հասցն[ր]ել և պատասխան բերել և նամակի պատասխանը ծոցին՝ Ասմարը վերադառնում է դեռ լույս չբացված: Եվ ինչպես փոքրիկ Թաղը ընդամենը հարյուրի չափ կռվողներով կարողացավ ամբողջ մեկ ամիս դիմադրել կառավարական զորքին երկու թնդանոթներով, ալանցիների հարյուրավոր չեթեներին և փախուստի մատնել կայմակամ Համդիին, թնդանոթաձիգ Ջելալեդինին և ալանցիների մյուդիր Շևքեթին:

Շատախի հերոսական պայքարի պատմության հուզող և ոգևորիչ տպավորության տակ հուլիսի 8-ին թողի Թաղը և ճանապարհ ընկա դեպի Վան, և որովհետև միևնույն օրը հասնելը հնարավոր չէր, ուստի գիշերեցինք Գյորան դաշտ կոչվող վայրում և հաջորդ օրը՝ հուլիսի 9-ին, դեռ Վան չհասած, ճանապարհը մի փոքր շեղեցի և մտա Հայոց Ձորի Հիրճ գյուղը:

Այս գյուղում ապրիլի 3-ին տեղի ունեցավ Իշխանի և նրա երեք ընկերների դավադրական սպանությունը: Իսկ մեկ օր անց հավաքեցին գյուղի տղամարդկանց՝ թվով 47 հոգի, լցրեցին դրանց Քյարիմ օղլի Ռաշիդ աղայի ախոռատունը և այդտեղ էլ կապեցին համազարկերի ու դիակները լցրին եկեղեցուն մոտիկ մեկ հորի մեջ ու հողով ծածկեցին: Իսկ Վանը գրավելուց և տաճիկների փախուստից հետո, դիակները հորից հանեցին և եկեղեցու պատի տակ մեծ փոս փորեցին ու բոլորին թաղեցին այդ փոսի մեջ՝ դարձնելով այդ եղբայրական գերեզման:

Ես տեսա Ռաշիդ աղայի երկու հարկանի տունը, որի երկրորդ հարկի մեկ սենյակում սպանել էին Իշխանին՝ իր ընկերներով, և տան առաջին հարկի ախոռատանը կոտորել էին 47 տղամարդկանց: Այդտեղ կատարված ոճիրների հետքերը՝ գնդակների ծակոտիները, դրոշմված մնում էին երկու սպանդանոցների պատերի վրա:

Հուլիսի 9-ին վերադարձա Վան, բոլորելով 12 օրվա շրջագայությունս, որի ընթացքում կրել էի մեկ մխիթարիչ, մեկ հոգեմաշ և անվերջ հուզող ապրումների ծանր բեռը:

---

[9] *Տիգրան Բաղդասարյան (1890–1955) – գնդապետ: Զինվորական կրթությունը ստացել է Կ. Պոլսի Հարպիե ռազմական ուսումնարանում: Ղեկավարել է Թաղի ինքնապաշտպանությունը: 1918–1920 թթ. մասնակցել է մի շարք մարտերի և կռվել Սուրմալուի ու Վեդիի թաթար խռովարարների դեմ: Մահացել է Թեհրանում:*